ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/66/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 15 հուլիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի հուլիսի 15-ին քննելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ ՎԻՎ/66/2024 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «Հետք» լրատվամիջոցի՝ «Դիանա Գասպարյանի սկեսուրն էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել» վերտառությամբ հրապարակումը[1] և

[1] https://hetq.am/hy/article/162586

ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, իրականացրել է վերոնշյալ հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1.2 ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանի 100 տոկոս բաժնեմասնակցությամբ «Նարե պլյուս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 5-ին ընդունված «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» և «Անշարժ գույքը բաժանելու և բաժանված գույքային միավորները հասցեավորելու մասին» թիվ 1614-Ա և 1615-Ա որոշումներով իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.3 ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը 2023 թվականի նոյեմբերի 24-ին, նոյեմբերի 28-ին, և դեկտեմբերի 13-ին «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձ, «Նարե պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն Ռուզաննա Ասատրյանին տրված թվով 20 շինարարության թույլտվություններով իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ այդ կերպ թույլ տալով

«Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.4 Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ ՎԻՎ/66/2024 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.5 Հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 17-ին Դիանա Մնացականի Գասպարյանին հասցեագրել է թիվ 01/1230-2024 ծանուցումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարույթի մասնակցի կողմից դրսևորած առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով 2024 թվականի ապրիլի 30-ին, ժամը՝ 15:00-ին վերջինիս ներկայությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու:

1.6 2024 թվականի ապրիլի 30-ին պատշաճ ծանուցված Դիանա Մնացականի Գասպարյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/124/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/66/2024 գործի քննությունը նշանակվել է 2024 թվականի մայիսի 17-ին, ժամը՝ 16:00-ին, ինչի կապակցությամբ վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է:

1.8 2024 թվականի մայիսի 14-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի աշխատակազմի քարտուղարին է ուղղվել Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի թիվ Ե-01/1523-2024 գրությունը՝ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից իր հետ փոխկապակցված անձ, «Նարե պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն Ռուզաննա Ասատրյանի օգտին ընդունված շինարարության թույտվությունների վերաբերյալ որոշումների լուսապատճենները տրամադրելու վերաբերյալ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դրանք հրապարակված չեն Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում:

1.9 2024 թվականի մայիսի 15-ին Հանձնաժողով է մուտքագրվել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի թիվ 2608 գրությունը, որին կից ներկայացվել են Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից «Նարե

պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն Ռուզաննա Ասատրյանին տրված թվով 20 շինարարության թույլտվությունները՝ Դիանա Մնացականի Գասպարյանի էլեկտրոնային ստորագրությամբ:

1.10 2024 թվականի մայիսի 17-ին Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեի միջոցով մուտքագրված գրությամբ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամկետը երկարաձգելու և այն մեկ այլ օր նշանակելու վերաբերյալ, որը Հանձնաժողովի կողմից բավարարվել է:

1.11 2024 թվականի մայիսի 17-ին Հանձնաժողովի կողմից կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու մասին թիվ ՎԻՎ/66-2024-1 որոշումը՝ թիվ 01/1666-2024 գրությամբ Դիանա Մնացականի Գասպարյանին ծանուցելով 2024 թվականի հունիսի 17-ին, ժամը՝ 16:00-ին հետաձգված գործի նոր քննության օրվա վերաբերյալ, որը վերջինիս կողմից ստացվել է 2024 թվականի մայիսի 21-ին:

1.12 Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հանձնաժողովի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգվել է ևս երկու անգամ՝ Հանձնաժողովի իրավազոր կազմի ապահովման նպատակով, որի մասին Դիանա Մնացականի Գասպարյանը պատշաճ ծանուցվել է:

1.13 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նոր քննության օր է նշանակվել 2024 թվականի հուլիսի 15-ին, ժամը՝ 16:00-ին, որի մասին Դիանա Մնացականի Գասպարյանը պատշաճ ծանուցվել է:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Արձանագրված առերևույթ իրավախախտումների առնչությամբ 2024 թվականի հուլիսի 15-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-3203-2024 գրությամբ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացվել է դիրքորոշում ՎԻՎ/66/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշման վերաբերյալ, համաձայն որի՝

ինքը չի կատարել այնպիսի գործողություն կամ անգործություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, քանի որ նշված որոշումները կայացնելիս առաջնորդվել է բացառապես համայնքային շահով:

Դիրքորոշմամբ Դիանա Մնացականի Գասպարյանը հայտնել է, որ Ռուզաննա Ասատրյանը հանդիսանում է իր ամուսնու մայրը: Վերջինիս հետ համատեղ չի բնակվում և վարում է առանձին տնտեսություն, և իր հետ փոխկապակցված անձ չի հանդիսացել, ուստի չէր կարող դրանով պայմանավորված առաջանալ ենթադրվող շահերի բախումը, որպեսզի պարտավոր լիներ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթով պայմանավորված դիմել Հանձնաժողովին:

Դիանա Մնացականի Գասպարյանը դիրքորոշմամբ հայտնել է, որ որոշումները կայացնելիս չի առաջնորդվել անձնական կամ մասնավոր շահով, և որևէ նպատակ չի ունեցել առավելություն կամ արտոնություն ձևավորելու իր կամ իր ընտանիքի անդամի նկատմամբ, մերձավոր ազգականի համար, որոնց հետ որևէ առնչություն չունի, իսկ վերոնշյալ որոշումներով առաջնորդվել է համայնքի շահերով՝ համայնքային զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներից ելնելով:

Միաժամանակ հայտնել է, որ նշված որոշումներն ընդունվել են ոչ միայն իր, այլև իրեն փոխարինող պաշտոնատար անձանց կողմից:

Դիանա Մնացականի Գասպարյանը, հղում կատարելով Վաղարշապատ համայնքի ավագանու 11.12.2023 թվականի թիվ 100-Լ որոշմամբ հաստատված 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի մի շարք դրույթների, նշել է, որ ինքը, առաջնորդվելով նշված ծրագրով, ընդունել է նշված որոշումները:

Դիանա Մնացականի Գասպարյանը, հղում կատարելով շահերի բախման հասկացության՝ միջազգային մի շարք ատյանների կողմից կատարված մեկնաբանություններին, նշել է, որ իր կողմից ընդունված որոշումներով կատարվել է իր՝ որպես պետական պաշտոն զբաղեցնող անձի, հանրային պարտավորությունները, որոնք միատեսակ կիրառություն կստանային ինչպես «Նարե պլյուս» ՍՊԸ-ի, այնպես էլ այլ կազմակերպությունների կողմից համապատասխան դիմումներ ներկայացվելու դեպքում:

Հաջորդիվ, հղում կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված՝ շահերի բախման կարգավորումների խախտման հոդվածին, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախման կարգավորումներին, Դիանա Մնացականի Գասպարյանը նշել է, որ ինքը, հանդիսանալով համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, օբյեկտիվ վարքագիծ

է դրսևորել նշված որոշումների կայացման ժամանակ, քանի որ առաջնորդվել է համայնքային շահով և կողմնակալ գործողություն չի կատարել հօգուտ ընկերության սեփականատեր Ռուզաննա Ասատրյանի, ով հանդիսանում է իր ամուսնու մայրը:

Դիանա Մնացականի Գասպարյանը նաև մի շարք պատճառաբանություններ է ներկայացրել առ այն, որ իր գործողությունները կատարել է բարեվարքության սկզբունքից ելնելով և ի օգուտ հանրային շահի:

Դիանա Մնացականի Գասպարյանը նշել է, որ նշված որոշումներով «Նարե պլյուս» ՍՊԸ-ին փաստացի առավելություններ կամ արտոնություններ չեն տրամադրվել, ուստի բացակայում է շահերի բախումը:

Ամփոփելով իր դիրքորոշումը, Դիանա Մնացականի Գասպարյանը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքները, որ ինքը և Ռուզաննա Ասատրյանը համատեղ չեն բնակվում, վարում են առանձին տնտեսություն և հիշյալ ընկերությունը և Ռուզաննա Ասատրյանը իր հետ փոխկապակցված անձ չեն հանդիսանում, իր կողմից պահպանվել են պետական գործառույթների իրականացման անկախությունը, անկողմնակալությունը և օբյեկտիվությունը, որպիսի պարագայում գտել է, որ առկա է վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայություն:

2.2 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Դիանա Մնացականի Գասպարյանի ներկայացուցիչ Էդվարդ Ափոյանը հայտնեց, որ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից որևէ միտում չի եղել որևէ բարեկամի կամ ազգականի օգտին իրավունքներ սահմանող փաստաթղթեր տրամադրելու: Սույն պարագայում, «Նարե պլյուս» ՍՊԸ-ի սեփականատերը հանդիսացել է Դիանա Գասպարյանի ամուսնու մայրը՝ Ռուզաննա Ասատրյանը, ում չի դիտարկել որպես իր հետ փոխկապակցված անձ, քանի որ համատեղ չեն բնակվել նույն հասցեում և վարել են առանձին տնտեսություն, ուստի վերջինս դիտարկել է որպես շահերի բախման բացակայություն, և չի ենթադրել, որ պետք է ներկայացնել հայտարարություն:

Դիանա Մնացականի Գասպարյանի ներկայացուցիչ Էդվարդ Ափոյանը նշեց, որ Դիանա Գասպարյանը իր ամուսնու հետ գտնվում է փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ 2023 թվականի մարտ-ապրիլ ամիսներից, և ամուսնությունը գրանցված չէ ՔԿԱԳ մարմնում, ուստի օրենքի իմաստով այն չի կարող համարվել

ամուսնություն: Ներկայացուցիչը նշեց, որ նշված որոշումներից մի մասը ընդունվել է Դիանա Մնացականի Գասպարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում՝ վերջինիս փոխարինող պաշտոնատար անձի կողմից, իսկ Հանձնաժողովի այն հարցին, թե արդյո՞ք Դիանա Մնացականի Գասպարյանին փոխարինող անձի կողմից ընդունված որոշումներում ստորագրությունը որևէ այլ կերպ, քան էլեկտրոնային ստորագրության տեսքով, կարող է արտացոլվել, ներկայացուցիչը պատասխանեց, որ չի կարող:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/66/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Դիանա Մնացականի Գասպարյանը ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 22-ի 817-Ա որոշմամբ նշանակվել է Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ 2018թ. հոկտեմբերի 21-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընտրվել է Էջմիածին համայնքի ղեկավար և պաշտոնավարում է մինչ օրս:

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Դիանա Մնացականի Գասպարյանի հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանը 2023 թվականի հուլիսի 18-ից հանդիսանում է «Նարե պլյուս» ՍՊ Ընկերության (ՀՎՀՀ՝) (այսուհետ նաև՝ Ընկերություն) 100% բաժնեմասի սեփականատերը:

3.3 «Հետք» լրատվամիջոցի՝ «Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանն ամուսնացել է» վերնագրով հրապարակման[2] Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացված դիրքորոշմամբ ներկայացված տվյալների, ինչպես նաև վերջինիս ներկայացուցչի կողմից հայտնած տվյալների համաձայն՝ Ռուզաննա Ասատրյանը հանդիսանում է Դիանա Մնացականի Գասպարյանի ամուսնու՝ Արամայիս Միրզոյանի մայրը:

[2] https://hayastan.news/am/post/2630

3.4 2023 թվականի սեպտեմբերի 5-ին Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ընդունվել է թիվ 1614-Ա որոշումը՝ իր հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանի 100% բաժնեմասնակցությամբ «Նարե պլյուս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի
հասցեում գտնվող հողամասի մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու վերաբերյալ:

3.5 2023 թվականի սեպտեմբերի 5-ին Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ընդունվել է թիվ 1615-Ա որոշումը՝ իր հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանի 100% բաժնեմասնակցությամբ «Նարե պլյուս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի
հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանելու մասին:

3.6 2023 թվականի նոյեմբերի 24-ին, 2023 թվականի նոյեմբերի 28-ին, և 2023 թվականի դեկտեմբերի 13-ին Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ընդունվել են թվով 20 որոշումներ «Նարե պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն, իր հետ փոխկապակցված անձ Ռուզաննա Ասատրյանին շինարարության թույլտվություններ տրամադրելու մասին (հիմք՝ 2024 թվականի մայիսի 15-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի թիվ 2608 գրությանը կից ներկայացված փաստաթղթեր):

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.2 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում

են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, **ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:** Գործարար հարաբերությունները ներառում են **տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար:** Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

4.4 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց,** այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.5 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.6 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.7 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունն ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

4.8 Օրենքի նույն հոդվածի 11-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը, որի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ **փոխկապակցված անձինք են՝պաշտոն զբաղեցնող անձի** ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա **ամուսնու** զավակը (այդ թվում՝ որդեգրված), **ծնողը** (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, իսկ 2-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են՝ **պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք,** այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք, իսկ նույն մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են՝ **այն կազմակերպությունը, որին մասնակցության** և (կամ) պայմանագրի **հիման վրա պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու** (այդ թվում՝ առք ու

վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) **կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:**

4.9 Նույն հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), **համայնքների ղեկավարների**, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա: Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի վրա սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը չեն տարածվում:

4.10 ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը (այսուհետ՝ Կարգ), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ համայնքի վարչական սահմաններում կառուցապատման նպատակով թույլտվությունները և այլ փաստաթղթեր տալիս է համայնքի ղեկավարը (...), իսկ 11-րդ կետի համաձայն՝ սույն կարգով նախատեսված բոլոր թույլտվությունները, համաձայնեցումները, եզրակացությունները, ակտերը և այլ փաստաթղթեր վավերացվում են դրանք տրամադրող համապատասխան անձանց ստորագրությամբ կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

4.11 Կարգի 25-րդ կետի համաձայն՝ Կառուցապատվող հողամասի գործառնական և (կամ) նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշումներով սահմանված կարգով՝ կախված տվյալ համայնքի գլխավոր հատակագծի առկայության կամ բացակայության հանգամանքից:

4.12 ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով սահմանված է Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը, որի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները, եթե դրանք չեն հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը, կատարվում են համայնքների ղեկավարների կողմից:

4.13 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը, տալիս է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման թույլտվություն:

4.14 ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման Հավելվածով սահմանված է անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգը, որի 50-րդ կետի համաձայն՝ համայնքների տարածքում տեղակայված անշարժ գույքը հասցեավորում են համայնքի ղեկավարները:

4.15 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**:

4.16 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.17 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.18 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.19 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.20 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.21 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից նույն օրենքով սահմանված դեպքերում շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնելուն առնչվող իրավահարաբերությունները:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է «շահերի բախման իրավիճակի» հասկացությունը, որի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթով բացահայտված է «Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը» բովանդակային սահմանները:

Վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջներն ապահովում են պաշտոնատար անձի մասնավոր շահի ինչպես հնարավոր, այնպես էլ փաստացի ազդեցության չեզոքացումը վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, որը կարող է դրսևորվել ինչպես որոշում կայացնելու, այնպես էլ գործողություն կատարելու արարքներում:

Սույն գործով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, ուստի, վերջինիս նկատմամբ տարածվում են Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված շահերի բախմանը վերաբերող իրավակարգավորումները:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Դիանա Մնացականի Գասպարյանը, որպես համայնքի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում կայացրել է որոշումներ՝ Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի՝ իր ամուսնու մոր բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու վերաբերյալ և անշարժ գույքը

բաժանելու և բաժանված գույքային միավորները հասցեավորելու վերաբերյալ: Միաժամանակ, ընդունել է թվով 20 որոշումներ՝ «Նարե պլյուս» ՍՊԸ-ի- տնօրեն Ռուզաննա Ասատրյանին շինարարության թույլտվություններ տրամադրելու վերաբերյալ, ով հանդիսանում է իր ամուսնու մայրը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վարույթի մասնակցի՝ պարզաբանմամբ ներկայացրած դիրքորոշմանն առ այն, որ ինքը չի կատարել այնպիսի գործողություն կամ անգործություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, քանի որ նշված որոշումները կայացնելիս առաջնորդվել է բացառապես համայնքային շահով, արձանագրում է հետևյալը:

Սույն վարույթի շրջանակներում, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգին, կառուցապատվող հողամասի գործառնական և (կամ) նպատակային նշանակության փոփոխություններին, ինչպես նաև շենքերի և շինությունների համարակալման, համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման թույլտվություններին առնչվող իրավակարգավորումները, Հանձնաժողովը արձանագրում է, որ նշված որոշումները կայացվում են համայնքի ղեկավարի կողմից՝ միանձնյա կարգով, որի շրջանակներում համայնքի ղեկավարը գործում է ի պաշտոնե՝ օրենսդրությամբ նախատեսված իր լիազորությունների շրջանակներում: Նշված հանգամանքը, սակայն, պաշտոնատար անձին չի ազատում վերոնշյալ որոշումների կայացման գործընթացում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորությունից, որով ապահովվում է պաշտոնատար անձի՝ շահերի բախման իրավիճակից զերծ մնալու օրենսդրի կողմից կանխորոշված նպատակը:

Այսպես, Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության,

իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Վերլուծելով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումները՝ պարզ է դառնում, որ նշված իրավակարգավորմամբ նախատեսվում է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու պարտականություն, որը չկատարելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իրավասու մարմին հայտարարություն չներկայացնելու արարքով:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ 2023 թվականի սեպտեմբերի 5-ին «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» և «Անշարժ գույքը բաժանելու և բաժանված գույքային միավորները հասցեավորելու մասին» թիվ 1614-Ա և 1615-Ա որոշումների ընդունման, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբերի 24-ին, նոյեմբերի 28-ին, և դեկտեմբերի 13-ին թվով 20 շինարարության թույլտվությունների վերաբերյալ որոշումների ընդունման արդյունքում նշված որոշումների ընդունման պահին Դիանա Մնացականի Գասպարյանին հայտնի է եղել նշված վարչական ակտերի հասցեատիրոջ՝ «Նարե պլյուս» ՍՊԸ-ի, և վերջինիս միակ բաժնեմասնակից և տնօրեն Ռուզաննա Ասատրյանի՝ իր հետ փոխկապակցվածության հանգամանքը:

Վկայակոչված հանգամանքով պայմանավորված՝ վարույթի մասնակիցը պարտավոր էր իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա իր մասնավոր շահի ազդեցության չեզոքացում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ձեռնպահ մնալ գործողություն կատարելուց, տվյալ պարագայում վերոնշյալ որոշումների ընդունումից, և Օրենքով սահմանված ժամկետում հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով: Մինչդեռ, վարույթի մասնակիցն օրենքով սահմանված ժամկետում ոչ միայն Հանձնաժողով չի ներկայացրել նշված հայտարարությունը, այլև, որպես համայնքի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում, կատարել է գործողություն՝ ընդունելով որոշումներ իր հետ փոխկապակցված անձի և վերջինիս բաժնեմասնակցությամբ

առևտրային կազմակերպության օգտին՝ այդ կերպ հայտնվելով Օրենքի իմաստով շահերի բախման իրավիճակում:

Ինչ վերաբերում է Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացված դիրքորոշմանը, համաձայն որի՝ ինքը չի կատարել այնպիսի գործողություն կամ անգործություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, քանի որ նշված որոշումները կայացնելիս առաջնորդվել է բացառապես համայնքային շահով, Հանձնաժողովն արձանագրում է, որ յուրաքանչյուր իրավիճակում, երբ վերադաս չունեցող պաշտոնատար անձի գործողությունը կարող է ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, նշված իրավիճակի լուծման կապակցությամբ պաշտոն զբաղեցնող անձը պետք է գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր: Եթե Հանձնաժողովը եզրահանգում է, որ նշված իրավիճակում առկա չէ շահերի բախում, ապա այդ դեպքում Հանձնաժողովն առաջարկում է շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը: Իսկ մինչ Հանձնաժողովի կողմից իրավիճակի լուծմանն ուղղված քայլերի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:

Նշվածից հետևում է, որ վերադաս չունեցող պաշտոնատար անձանց պարագայում Օրենսդիրը շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգում իրականացնելու բացառիկ լիազորությունը վերապահել է Հանձնաժողովին, ինչը նշանակում է, որ պաշտոն զբաղեցնող անձը, տվյալ դեպքում՝ Դիանա Մնացականի Գասպարյանը, չպետք է ինքնուրույն գնահատականներ տա շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության վերաբերյալ, այլ պետք է օրենքով սահմանված ընթացակարգով ապահովի լիազոր մարմնին համապատասխան գրավոր հայտարարության ներկայացումը, որից հետո առաջնորդվի լիազոր մարմնի կողմից ներկայացված առաջարկով:

Ինչ վերաբերում է Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ Ռուզաննա Ասատրյանը հանդիսանում է իր ամուսնու մայրը, սակայն վերջինիս հետ համատեղ չի բնակվում և վարում է առանձին տնտեսություն, ինչից էլ

ենթադրվում է, որ Ռուզաննա Ասատրյանը իր հետ փոխկապակցված անձ չի հանդիսանում, հետևաբար դրանով պայմանավորված՝ չէր կարող առաջանալ ենթադրվող շահերի բախման իրավիճակ, որպեսզի ինքը պարտավոր լիներ դիմել Հանձնաժողովին, ապա Հանձնաժողովը նշված փաստարկը հիմնավոր չի համարում հետևյալ հիմնավորումներով.

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարական, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13) շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է առավելությունների կամ արտոնությունների ձևավորում իր անձի կամ իր ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հանրային ծառայությունում շահերի բախման իրավիճակների կառավարման մասին ուղեցույցում շահերի բախումը բնութագրում է հետևյալ կերպ՝ շահերի բախումն ընդգրկում է հանրային ծառայողի մոտ հանրային պարտականությունների և մասնավոր շահերի կոնֆլիկտը, որտեղ հանրային ծառայողն ունի մասնավոր շահ, որը կարող է անտեղի ազդեցություն ունենալ հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների իրագործման վրա: Եթե շահերի բախման իրավիճակները պատշաճորեն չնույնականացվեն և կառավարվեն, ապա դրանք կարող են լրջորեն վտանգել կազմակերպությունների բարեվարքությունը և հանգեցնել կոռուպցիայի ինչպես հանրային ոլորտում, այնպես էլ մասնավոր:

Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի «Շահերի բախումը տեղական և տարածքային մակարդակներում» հուշագրում սահմանվում են շահերի բախման քաղաքականության նպատակները և խնդիրները՝ նշելով, որ ընդհանուր առմամբ, շահերի բախման քաղաքականությունները չպետք է միայն լինեն շահերի բախման կանխարգելման գործիք: Դրանք պետք է նաև՝

-Մեծացնեն վստահությունը կառավարության նկատմամբ

-Ցուցադրեն ընտրված ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց բարեվարքության բարձր մակարդակը,

-Կանխարգելեն շահերի բախման ի հայտ գալը, քանի որ պաշտոնական գործողությունները ենթակա կլինեն հանրային հսկողության,

-Պետական պաշտոնավարումից հետ պահեն այնպիսի անձանց, որոնց անձնական ֆինանսական միջոցները ենթակա չեն հանրային հսկողության,

-Հանրությանն ավելի մեծ հնարավորություն ընձեռեն պետական պաշտոնատար անձանց կատարողականի մասին դատելու՝ վերջինների արտաքին ֆինանսական շահերի լույսի ներքո:

Ոչ միայն Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված Վարքագծի կանոնագիրքը, այլ նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախման հասկացության մեջ ընդգրկում են նաև հավանական և թվացյալ շահերի բախումը: Ըստ ՏՀԶԿ-ի մեկնաբանության՝ հավանական և թվացյալ շահերի բախումը ևս վտանգում է պաշտոնեական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը: Պաշտոնատար անձինք որոշումների կայացման ժամանակ պետք է հաշվի առնեն նաև հանրային ընկալումները: ՏՀԶԿ-ն առաջարկում է, որ հավանական և թվացյալ շահերի բախման դեպքերը ևս պետք է բացառվեն, որպեսզի նվազեցվեն պաշտոնատար անձի համբավի առնչությամբ այն ռիսկերը, որոնք կարող են վնասել անձի/համակարգի բարեվարքությանը (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հանրային ծառայությունում շահերի բախման կառավարում, գործիքակազմ 1):

ՏՀԶԿ-ն շահերի բախումը սահմանում է որպես հակասություն պաշտոնատար անձի մասնավոր շահի և պաշտոնեական պարտականությունների միջև, որի պարագայում անձի մասնավոր շահը կարող է ոչ պատշաճ կերպով ազդել պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա (ՏՀԶԿ Գործիքակազմ հանրային պետական ոլորտում շահերի բախման կառավարման վերաբերյալ, տե՛ս էջ 13):

«Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը, որի 1-ին կետի կարգավորումներից բխում է, որ պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձ է համարվում նաև

վերջինիս ամուսնու ծնողը, իսկ 2-րդ կետի վերլուծությունից բխում է, որ պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձ կարող է հանդիսանալ նաև իր հետ ոչ ազգակցական, սակայն սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձը: Նույն հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետի վերլուծությունից բխում է, որ պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձ կարող է հանդիսանալ նաև այն կազմակերպությունը, որին մասնակցության հիման վրա պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:

Հանձնաժողովը գտնում է, որ Դիանա Մնացականի Գասպարյանի դիրքորոշումն առ այն, որ Ռուզաննա Ասատրյանը չի կարող հանդիսանալ իր հետ փոխկապակցված անձ, քանի որ ինքը վերջինիս հետ համատեղ չի բնակվում և վարում է առանձին տնտեսություն, անհիմն է, քանի որ շահերի բախման հնարավոր ռիսկերը չեն կարող մեկնաբանվել՝ սահմանափակվելով պաշտոնատար անձի և նրա հետ փոխկապակցված անձի առանձին բնակվելու կամ առանձին տնտեսություն վարելու հանգամանքով: Ասվածի հիմնավորմանն է ուղղված հետևյալը.

Մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 540-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված շահերի բախման կառուցակարգերը օրենսդրի կողմից սահմանված էին առավել նեղ շրջանակով, որի 33-րդ հոդվածով որպես պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձինք սահմանված էին շատ ավելի նեղ շրջանակով, այսինքն փոխկապակցված անձինք էին հանդիսանում միայն պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ,

եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:

Պատահական չէ, որ հետագայում առաջացավ շահերի բախման կառուցակարգերի ընդլայման օրենսդրական անհրաժեշտություն, որի արդյունքում փոփոխվեց Օրենքի՝ շահերի բախման կարգավորումները նախատեսող հոդվածը, և արդեն նշված փոփոխությամբ ընդլայնվեց նաև պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը՝ դրանց թվում նախատեսելով նաև պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձանց, ինչպես նաև այն կազմակերպություններին, որոնց մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:

Նշված փոփոխությունները նպատակ էին հետապնդում առավել ամրապնդելու կոռուպցիայի կանխարգելումը, այդ թվում՝ շահերի բախման հնարավոր բոլոր իրավիճակների առավելագույն բացառման իրավական հնարավորության ապահովմամբ, որի նպատակով էլ Օրենքով Հանձնաժողովին վերապահվեց առավել լայն գործիքակազմ՝ վերահսկելու նաև շահերի բախման այն բոլոր դեպքերը, որոնք կարող են դրսևորվել պաշտոնատար անձի և այլ անձի միջև ինչպես ազգակցական, այնպես էլ ոչ ազգակցական, սակայն սերտ անձնական հարաբերությունների շրջանակներում: Օրենսդրական փոփոխությունները ուղղված էին նաև շահերի բախման իրավիճակների առավել լայն վերահսկողությանը՝ ելնելով նաև օբյեկտիվ դիտորդի (անաչառ երրորդ անձի) ընկալման տեսանկյունից, որպեսզի պաշտոնատար անձի կողմից իր հետ փոխկապակցված անձի օգտին կատարված յուրաքանչյուր գործողություն դուրս չմնա իրավական պետության

տեսադաշտից՝ անկախ հարաբերությունների օրինական ձևակերպված լինելու հանգամանքից, կամ այլ գործոններից:

Ամբողջ վերոնշյալը հաշվի առնելով՝ պարզ է դառնում, որ տվյալ դեպքում Դիանա Գասպարյանի կողմից իր ամուսնու մոր հետ համատեղ չբնակվելու, կամ համատեղ տնտեսություն չվարելու հանգամանքը չի կարող չեզոքացնել օբյեկտիվ դիտորդի ընկալումն առ այն, որ Ռուզաննա Ասատրյանը և վերջինիս բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպությունը հանդիսանում են Դիանա Մնացականի Գասպարյանի հետ փոխկապակցված անձինք, և որ տվյալ իրավիճակում, Դիանա Մնացականի Գասպարյանը, նախքան վարույթով քննարկվող որոշումների ընդունումը, պարտավոր էր դրանց մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ նշված պայմաններում Դիանա Մնացականի Գասպարյանի ամուսնության՝ օրենքով սահմանված կարգով գրանցված չլինելու հանգամանքը, ինչպես նաև վերջինիս կողմից իր ամուսնու մոր հետ համատեղ տնտեսություն չվարելու, և համատեղ չբնակվելու հանգամանքը տվյալ դեպքում չի կարող ունենալ էական նշանակություն, քանի որ, անկողմնակալ դիտորդի տեսանկյունից փաստացի ամուսնու մոր կամ վերջինիս հետ փոխկապակցված ընկերության օգտին կայացված որոշումն ինքնին ընկալվում է որպես առերևույթ շահերի բախման դեպք, և չի կարող դրա հարաբերությունների պաշտոնական ձևակերպված լինելն ընկալման տեսակետից էական ազդեցություն ունենալ:

Անդրադառնալով Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ ինքը որոշումները կայացնելիս չի առաջնորդվել անձնական կամ մասնավոր շահով, և **որևէ նպատակ չի ունեցել** առավելություն կամ արտոնություն ձևավորելու իր կամ իր ընտանիքի անդամի նկատմամբ, մերձավոր ազգականի համար, ապա Հանձնաժողովը նշված փաստարկը վերաբերելի չի համարում սույն վարույթի շրջանակներում քննարկվող առարկային, քանի որ սույն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգքրքի 169.31-րդ հոդվածի հիմքով, որի պարագայում նախատեսված է վարչական պատասխանատվություն վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու արարքի համար, իսկ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից բերված փաստարկը վերաբերում է իր ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի համար առավելություն կամ արտոնություն ձևավորելու նպատակի բացակայությանը, որպիսի պարագայում արարքում նպատակի (դիտավորության) հատկանիշի առկայության քննարկման լիազորությունը օրենսդրությամբ վերապահված է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին, ուստի Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացված վերը նշված փաստարկը առարկայազուրկ է:

Անդրադառնալով Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ վերջինս հայտնել է, որ սույն վարույթով քննարկվող որոշումներն ընդունվել են ոչ միայն իր, այլև իրեն փոխարինող պաշտոնատար անձանց կողմից, որպիսի դիրքորոշումը նաև հաստատել է Դիանա Մնացականի Գասպարյանի ներկայացուցիչը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում իրավախախտման կատարման համար էական է հանդիսանում ոչ թե Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից ընդունված որոշումների քանակը, այլ Վարչական իրավախախտման վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածով սահմանված կարգավորումների խախտման փաստը, որի դրսևորման համար բավարար է պաշտոնատար անձի կողմից նշված հոդվածի խախտմամբ ընդունված մեկ գործողության (անգործության) կատարումը կամ որոշման ընդունումը:

Սույն գործով առկա փաստերի համադրման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումն ապահովելու նպատակով չեն ձեռնարկվել օրենքով սահմանված համապատասխան գործողություններ շահերի բախման իրավիճակում չհայտնվելու կամ հնարավոր նման իրավիճակում հայտնվելու պարագայում օրենքով նախատեսված կանխարգելման ընթացակարգերով առաջնորդվելու ուղղությամբ:

Վերոշարադրյալի արդյունքում, սույն գործով վարույթի մասնակցի կողմից խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու առնչությամբ,

որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վերոնշյալ իրավախախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցին, գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վերոշարադրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից կատարված արարքը հանգեցնում է օրենքով պահպանվող շահերի՝ սույն դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված՝ շահերի բախմանը վերաբերելի իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը՝ հաշվի առնելով այն, որ վարույթով քննարկվող որոշումներն ընդունելուց առաջ, պաշտոնատար անձը չի ներկայացրել գրավոր հայտարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, և, ըստ էության, ձեռնպահ չի մնացել գործողություն կատարելուց: Միաժամանակ, առկա չեն եղել նաև այն դեպքերը, երբ անհապաղ գործողություն կատարելը պայմանավորված է եղել անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Այսպիսով, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը իր լիազորությունների շրջանակում 2023 թվականի սեպտեմբերի 5-ին «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» և «Անշարժ գույքը բաժանելու և բաժանված գույքային միավորները հասցեավորելու մասին» թիվ 1614-Ա և 1615-Ա որոշումների ընդունմամբ, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբերի 24-ին, նոյեմբերի 28-ին, և դեկտեմբերի 13-ին թվով 20 շինարարության թույլտվությունների վերաբերյալ որոշումների ընդունմամբ կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող

էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձն «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում շահերի առկայության մասին գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ խախտելով օրենքով սահմանված շահերի բախմանը վերաբերելի իրավակարգավորումների պահանջը:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ **300 000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիանա Մնացականի Գասպարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ